

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ  
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻ ՏԱԿ

ԳԼՈՒԽ Ա

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՒԹԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ա ՄԱՍ

Ս. ԹԱԴԵՈՍ Ի ՀԱՅՍ

«Գնացեք այսուհետև աշակերտեցեք զամենայն հեթանոսս, մկրտեցեք զնոսս յԱնուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»:<sup>1</sup>

Ըստ Մատթէոս Աւետարանիչի, Յիսուսի Քրիստոսի այս խօսքին հետեւելով՝ առաքելները զանազան շրջաններ և երկրներ գացին վարդապետութիւնը տարածելու համար: Եւ ըստ եկեղեցւոյ աւանդութեան անոնցմէ երկուքը՝ Ս. Թադէոսը եւ Ս. Բարթողիմէոսը գացին Հայաստան քարոզելու: Հայ եկեղեցւոյ նուիրապետութեան հիմքերը կը կազմեն Ս. Թադէոս Առաքելի հիմնած Արտագի եպիսկոպոսական աթոռը եւ Ս. Գրիգոր Լուսավորչի հիմնադրած եպիսկոպոսութիւնները:

Հակառակ որոշ պատմաբաններու եւ աստուածաբաններու աշխատանքներու և գոյութիւն ունեցող իրարու հակասող տեսակետների՝ հայ եկեղեցւոյ առաքելականութիւնը կը կարօտի լուրջ ուսումնասիրութեան եւ լուսաբանութեան:

Այստեղ անհրաժեշտ կը գտնենք յիշել, որ հայ գրականութիւնը սկիզբ առաւ Ե. դարու առաջին տարիներուն: Ե. դարը մեզի համար եղաւ Ոսկեդար, ուր հայ լեզուն եւ գրականութիւնը իր դասական գրաբարով հասաւ իր գագաթնակէտին, եւ պէտք է ըսել, որ նոյն դարու ամենահին պատմիչներուն մօտ իսկ վկայութիւններ կան հայոց եպիսկոպոսական Աթոռի առաքելական ծագման մասին: Հայոց Պատմութիւնը մեզի հասած է Ե. դարու պատմիչներ Կորիւնի, Խորենացիի, Եղիշէի, Ագաթանգեղոսի եւ Բիւզանդի աշխատանքներէն, սակայն ինչ որ մեր նիւթին հիմնականում կը վերաբերի կը գտնենք Փաստոսէն եւ Խորենացիէն հասած տեղեկութիւններուն մէջ:

Լաբուրնիայի ասորական գործէն մեզի ծանօթ է թէ Յուդա-Թովմաս 12 առաքելներէն մէկն էր: Ան Թադէոս Դիդիմոս երկուորեակը, որ 70 աշակերտներէն մէկն է, ղրկեց Եդեսիա կատարելու Քրիստոսի տուած խոստումը: Ըստ աւանդութեան Թովմաս Առաքելս զինք կը ղրկէ Եդեսիա բուժելու համար Աբգար թագաւորը: Հիմնուելով Լաբուրնիայի աւանդական պատմութեան վրայ ու մեր առջեւ ունենալով ուրիշ տեղեկութիւններ՝ մանաւանդ մատենագիրներ, Հայ եկեղեցին ես համոզուած է, որ Թովմաս գացած է Հնդկաստան եւ իր շրջանները, իսկ Թադէոս՝ Ուռհա եւ իր շրջանները, եւ Հայաստանը իրեն վիճակուելով, «Ուռհա եւ ամենայն քաղաքք որ շուրջ գնովաւ Մծրին եւ Արաքք եւ սահմանակիցք Միջագետտաց, Հայք եւ ամենայն հիւսիսի եւ հարաւ»:<sup>2</sup> Որպէս Առաքելս ա՛ն կը կապուի Հայոց Պատմութեան մէջ ամենէն կարեւոր շրջադարձներէն մէկուն հետ, քրիստոնէութեան մուտքը Հայաստան:

Լաբուրնիայի պատմութեան համաձայն Աբգար մարդ ղրկած էր, որ Յիսուսը

<sup>1</sup> Մատթէոս, ԻԸ: 18:

<sup>2</sup> Գիրք Կանոնաց եւ Դատաստանի, վերստին գաղափարեալ զգուշաւոր բաղդատութեամբ, գրչագիր թղթեայ, Կանոն 9, 4. Պոլսի, 1831.էջ 374:

հրաշիրէ Եդեսիա բուծելու համար զինք: Յիսուս ոչ միայն նամակին կը պատասխանէ, այլ կը խոստանայ իր աշակերտներէն մէկը զրկել զինք բուծելու, իր համբարձումէն ետք: Թաղէտը ոչ միայն կը բուծէ Աբգարը, այլ կը մկրտէ զինք եւ քարոզելէ յետոյ իշխաններ, իշխանութիւններ, ինչպէս նաեւ ժողովուրդը քրիստոնեայ կը դառնան: Եւ կը կառուցուին եկեղեցիներ:

Լաբուրնիայի այս պատմութիւնը գրեթէ նոյնութեամբ կը կրկնուի Եւսեբիոս Կեսարացիի «Եկեղեցւոյ պատմութեան» մէջ<sup>3</sup>, ինչպէս նաեւ Խորենացիի Հայոց Պատմութեան մէջ:<sup>4</sup> Լաբուրնիայի պատմութեան մէջ Թաղէտ Եդեսիոյ մէջ մեռած կը յիշուի: Իսկ Եւսեբիոսի մօտ անոր մահուան մասին ոչինչ չէ յիշուած: Իսկ Խորենացին Լաբուրնիայի ըսածները նոյնութեամբ կը կրկնէ եւ կ'աւելցնէ նաեւ որ Աբգարը Հայոց թագաւոր էր, ինչ որ պատմագիտութեան մէջ զանազան կարծիքներու տեղի տուած է<sup>5</sup>: Խորենացին եւս մէկ բանով կը տարբերի Լաբուրնիայի ասորերէն պատմութենէն եւ Եւսեբիոսէն, որ Թաղէտին մահուան տեղը կը յիշէ Հայաստանի մէջ՝ Արտազ:<sup>6</sup>

Լաբուրնիայի պատմութիւնը պահուած է երկու պատմութիւններու մէջ, ասորերէն լեզուով, առաջինը՝ կիսատ, իսկ երկրորդը՝ լման, հինը՝ հայերէն-ասորերէնէ թարգմանուած - նորը՝ ասորերէն: Առաջինին մէջ Աբգարի որդին, Սեւրոս թագաւորի հրամանով Թաղէտ կը նահատակուի Եդեսիոյ մէջ, իսկ երկրորդին մէջ ան կ'անցնի Հայաստան եւ Սանատրուկ թագաւորի հրամանով կը նահատակուի Արտազ:

Եւսեբիոս պատմիչ իր «Եկեղեցական պատմութիւնը» գրած առեւ անկասկած ունեցած է Լաբուրնիայի մէկ տարբերակը: Ասոր հայերէն թարգմանութիւնը պէտք է եղած ըլլայ Ե. դարուն:<sup>7</sup> Հայկականին համաձայն Ադդան կամ Թաղէտը չի մահանար Եդեսիա, այլ քարոզելէն յետոյ Ադդան կը ծնունդով եւ որպէս յաջորդ կը նշանակէ, յետոյ կ'երթայ «ընդ արեւելս քարոզել զԱւետարանն Քրիստոսի»:<sup>8</sup>

Շատեր կ'եզրակացնեն, թէ այս պատմութիւնը գրուած է երրորդ դարուն, իսկ Tixeront-ը կ'ըսէ նկատելով որ Եւսեբիոսը օգտագործած է այն, ուրեմն առաջին օրինակը գրուած պէտք է ըլլայ երրորդ դարուն, իսկ երկրորդ օրինակը, որ Եւսեբիոսը չունէր եւ չէ օգտագործած, ուրեմն չորրորդ դարուն գրուած կ'ըլլայ: Մենք կը հաւատանք այդ չորրորդ դարու երկրորդ անձի մը կողմէ սրբագրուած ըլլալու տեսակետին: Անշուշտ, Եւսեբիոսը կրնանք ըսել մինչեւ այսօր մեր ունեցած տեղեկութիւններէն առաջինն է եղած, որ օգտագործած է այս պատմութիւնը: Եւսեբիոս իր պատմութեան մէջ կը գրէ, թէ երբ այս գիրքը կը գրէր, ոչ միայն պատմութիւնը ունէր իր աղբերը, այլ նամակները, այսինքն Աբգար թագաւորի գրած նամակը Քրիստոսի եւ Քրիստոսի պատասխանը անոր եւ նոյնութեամբ կ'ընդօրինակէ զանոնք:<sup>9</sup>

<sup>3</sup> Եւսեբիոս Կեսարացւոյ Պատմութիւն Եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, էջ 62-66, 75:

<sup>4</sup> Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան 1991, էջ 149-152:

<sup>5</sup> Ասորական Աղբյուրներ Ա. Կեղծ Յովսէպ Ստիլիտ թարգմ. Հ. Գ. Մեյքոնյան Երևան, 1976, էջ 47-53, Ասորական Աղբյուրներ, Բ., Անանուն Եդեսացի, Ժամանակագրութիւն, Լեոն Տեր-Պետրոսյան, Երևան, 1982, էջ 20-21

<sup>6</sup> Մովսէս Խորենացւոյ Մատենագրութիւնը, Վենետիկ, 1843, էջ 111:

<sup>7</sup> Լաբուրնիա, Թուղթ Աբգարու: Ղերութեան Թուղթ Աբգարու թագաւորին Հայոց եւ քարոզութիւնը Սուրբ Թաղէի Առաքելոյ, Երուսաղէմ, 1868:

<sup>8</sup> Tixeront: Les Origines de l'Eglise d'Edesse et la legend d'Appar, Paris, 1885 p. 83:

<sup>9</sup> Եւսեբիոս Կեսարացի, էջ 61-62:

Մովսես Խորենացին, երբ իր «Հայոց Պատմութիւնը» կը գրէր, Եսեբիոս Կեսարացիի «Եկեղեցւոյ պատմութիւնը» ունէր իր առջեւը<sup>10</sup>, սակայն չիշէր մեր ճշանատոր Մերովման եպիսկոպոսը: Եսեբիոսի եւ Խորենացիի միջեւ եղած տարբերութիւնը այն է, որ Եսեբիոս չի խօսիր Թաղէտի մահուան մասին, իսկ Խորենացին զայն նախատակաւ կը նկատէ Հայաստան: Հետեւաբար Եսեբիոս գործածած է Լաբուրնիայի կիսատ օրինակը եւ Խորենացին գործածած է հայերէնը, որ լման է: Եսեբիոսէն մեզի հասած տեղեկութիւնները ունին մեծ ճշանակութիւն: Ան տեղի չի տար անելորդ կասկածներու, Խորենացիի ըսածներուն մասին: Մասնագիտական ուսումնասիրութիւնները ցոյց կուտան, որ Խորենացիի մօտ կը հանդիպինք ազգայնական այն ջիղը, որ մեծ Պատմահօր մօտ բնականաբար գոյութիւն պիտի ունենար:

Որքան կարելորդ են մեզի համար Հայ եկեղեցւոյ պատմիչներուն, աստուածաբաններուն կողմէ հասած կարծիքները, նոյնքան եւ կարելորդ է նաեւ օտար պատմիչներու ըսածը: Ծնորդի հայ պատմիչներուն Հայ եկեղեցւոյ պատմութիւնը եւ աւանդութիւնը պահում է, եւ թէ՛ հայ պատմիչները ուղղամտութեմէ եւ ազգասիրութեմէ տարուած ի նպաստ Հայ եկեղեցւոյ պիտի խօսէին, ապա շատ տրամաբանական կը թուի մեզի Օրմանեանի հետեւեալ կարծիքը. «Բայց նա Լաբուրնիա, պէտք չունէր երբեք այդ պատուաստը կատարել ազգային աւանդութեան վրայ, քանի որ Թաղէտս Դիդիմոսէ զատ, որուն գոյութիւնը իսկ անծանօթ մնացած է յոյն եւ լատին եկեղեցիներու մէջ, եւ միայն ասորի հեղինակէ մը յիշուած ու հայերուն փոխանցած է»: <sup>11</sup> Երկուտասաններէն մէկը<sup>12</sup> Թաղէտս որ կոչուած է նաեւ Ղեբէտս եւ Յուդա Յակոբեան եւ հետեւաբար ամենէն ճշգրիտը պիտի ըլլայ Յուդա Թաղէտի անունով մեկնել Հայոց Թաղէտի առաքելութիւնը: Անելցնելու ենք հայկական աղբիւր մըն ալ, որուն մէջը երբեք չի յիշուիր Թաղէտի 70 աշակերտներէն եղած ըլլալը եւ զայն կը դասէ տասներկու առաքելներու կողքին<sup>13</sup>: Անշուշտ 12 առաքելներու ցանկին մէջ նոյն այն անձն է, ինչ որ Թաղէտս կամ Ղեբէտս: Անելի պարզ եւ յստակ ցոյց տալու համար Կարապետ եպիսկոպոս Մկրտիչեանէն կը մէջբերենք, ըսելով թէ. «Եթէ ի նկատի առնենք, որ Թաղէտս Առաքելի բուն վկայութեան մէջ ոչ մի ակնարկ չկայ այդ մասին, թէ նա 72 աշակերտներէն է, այլ նա կը ներկայանայ անելի իբրեւ 12 առաքելներէն մէկը, կարելի է ենթադրել, որ հայկական աւանդութիւնը ըսկզբում այսպէս էր ըմբողմում երկուտասան առաքելներից մէկին՝ Յուդա Թաղէտս-Ղեբէտսին, իբրեւ Հայաստանի իսկական առաքելալ»<sup>14</sup>:

Հիմ ասորերէն առաքելական կանոններն ալ Հայոց առաքելա եղող Թաղէտի համար կ'ըսեն «Որ է մի յերկուտասան առաքելոցն»<sup>15</sup>:

Խորենացին միակ պատմաբանը չէ, որուն մօտ կը հանդիպինք Թաղէտս Առաքելի Հայաստան գալուն ու քրիստոնէութիւնը քարոզելուն մասին: Այս մասին կը հանդիպինք նաեւ մեր պատմիչներէն Փաւստոս Բիւզանդի մօտ:

Բիւզանդն ալ իր «Պատմութիւն Հայոց»-ին մէջ կը գրէ, թէ Թաղէտը Հայաստան քարոզած է եւ նահատակուած: «Ի քարոզութեմէ Թաղէտի Առաքելոյ եւ նորուն յելից եւ ի մարտիրոսութենէն մինչեւ ի կատարումն վարդապետութեան Գրիգորի եւ իւրոյ

<sup>10</sup> Մովսես Խորենացի, Հայոց Պատմութիւն, Երևան 1991, էջ 120:

<sup>11</sup> Մաղաքիա Արք. Օրմանեան, Ազգապատում, Բ. Ա., Կ. Պոլիս, 1912 էջ 24:

<sup>12</sup> Մատթէոս Ժ.3. Մարկոս Գ.18, Ղուկաս Զ.16, Գործ. Ա. 13

<sup>13</sup> Սուկերք Հայկական Ը, 11.59, Վենետիկ, 1853:

<sup>14</sup> Կարապետ վրդ. Մկրտիչեան, Հայոց եկեղեցական Պատմութիւն, Վաղարշապատ, 1908:

<sup>15</sup> W. Cureton, Ancient Syriac Documents, Amsterdam 1967, p. 37:

հանգստեանն, եւ յառաքեալսպան Սանատրուկայ արքային...»:<sup>16</sup> Այս հատուածին մէջ նախ՝ յստակ է Թաղէտի առաքելութիւնը եւ երկրորդ՝ Սանատրուկի առաքելասպան ըլլալը: Փաստոս կը հաւատայ նաեւ Հայոց հայրապետութեան Թաղէտի Աթոռ ըլլալուն: Ապա կը շարունակէ Յուսիկի ձեռնադրութենէն յետոյ «Եւ Տառուցին զՆա Աթոռն Առաքելոյն Թաղէտի, եւ յԱթոռ իւրոյ Հատուն մեծին Գրիգորի»:<sup>17</sup>

Վերոյիշեալ երկու հատուածներուն մէջ ալ Թաղէտին անունը կապուած է Լուսաւորիչին: Ասկէ կը հետեցնենք, թէ առաջին Լուսաւորիչի՝ Թաղէտ Առաքելի եւ Գրիգոր Լուսաւորիչի միջեւ Բիւզանդ խորունկ կապ մը կը տեսնէ եւ այդ կապը կը պահէ:

Երրորդ կարեւոր հատուած մըն ալ կայ, որ դարձեալ կը քաջատրէ Հայոց Աթոռին առաքելականութիւնը. «Որ ոչ հաւանեալ գործոց մեղացն ձերոց, սուրբ մանուկն Յուսիկն զհայրապետն զաթոռակալն զվիճակակալն զվիճակին Թաղէտի Առաքելոյն եւ զնորին նմանոյն Գրիգորի»:<sup>18</sup> Հետաքրքրականը այն է, որ այս անգամ Փաստոս, Թաղէտի Աթոռը ըսելու տեղ կը գործածէ «վիճակ» բառը: Միշտ պահելով այդ կապը Առաքելային եւ Լուսաւորիչին միջեւ:

Ըստ Նորայր Արք. Պողարեանի Փաստոսի գործը խմբագրուած է Կորինթի կողմէ<sup>19</sup>: Հետեւաբար Կորինթ ըլլալով ոչ միայն իմաստուն, այլեւ քաջատեղեակ այդ անդրադարձումներուն, պիտի չընդունէր գաղափարներ եւ մտածումներ, որոնք չէին համապատասխաներ իրականութեան: Որեմն կրնանք ըսել, թէ Կորինթ ալ կը հաւատար Լայոց եկեղեցւոյ առաքելականութեան:

Վերջին եւ չորրորդ հատուածը, որ Փաստոսի մօտ գոյութիւն ունի Հայոց եկեղեցւոյ առաքելականութեան մասին հետեւեալն է. «Վասն այսորիկ յիրաւի օւրժանի եղեւ սա Աթոռոյն Հայրապետաց եւ տեղւոյ հարցն իւրոց առաջնոց, զԱթոռն Թաղէտի Առաքելոյ, եւ ժառանգութիւն հօրն, մարմնապէս ի նոյն հոգեւորին Գրիգորի»:<sup>20</sup>

Քանի որ Փաստոսը մեզի այս ճշգրիտ տեղեկութիւնները կու տայ, պէտք չէ մեզմէ վրիպի այն տեսակէտը, որ հաւանաբար Փաստոս իր Պատմութիւնը գրած ատեն ունէր ուրիշ աղբիւրներ, կամ տուեալներ, կամ իրեն հասած ամանդութիւններ, որոնք մեզի անծանօթ են:

Հայոց ձեռագիրներուն մէջ կայ նաեւ ուրիշ գործ-մը, որ անելի ուշ ժամանակէ հասած է մեզի եւ կը կոչուի «Վկայութիւն Թաղէտի Առաքելոյ քարոզութեանն եւ զայստեանն ի Հայս եւ կաւարմանն որ ի Բրիստոս»:<sup>21</sup> Գրեթէ նոյն պարունակութեամբ, սակայն անելի համառօտ տարբերակ մըն ալ մեզի հասած է հետեւեալ վերնագիրով. «Վկայութիւն Սրբոյն Սանդիստոյ դստերն Սանատրուկայ Արքայի»:<sup>22</sup> Այս երկու գործերուն մէջ ալ Թաղէտ կը յիշուի որպէս Հայ եկեղեցւոյ առաքեալ եւ Լուսաւորիչ, իր Հայաստան գալը, ապա Սանդիստին քրիստոնեայ ըլլալը, եւ երկուքին Սանատրուկ թագաւորի հրամանով նահատակուիլը:<sup>23</sup> Այս գործին մէջ ցոյց կը տրուի, թէ Թաղէտ, Նշեալի

<sup>16</sup> Փաստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւն Վենետիկ, 1889:

<sup>17</sup> Նոյն, էջ 30:

<sup>18</sup> Նոյն, էջ 41:

<sup>19</sup> Նորայր Արք. Ծովական, Կորինթ վարդապետի գործը, Երուսաղէմ, 1984, էջ 1:

<sup>20</sup> Փաստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւն Վենետիկ, 1889 էջ 72:

<sup>21</sup> Սոսիեր Հայկական, Ը. Վենետիկ, 1853:

<sup>22</sup> Նոյն, էջ 77:

<sup>23</sup> Նոյն, էջ 99:

կ'երթայ պարզապէս, որովհետեւ Եդեսիա Հայաստանի ճամբուն վրայ կը գտնուէր:

Հայ կաթողիկէ հայրերը միշտ ուզած են Հայոց եկեղեցւոյ ծագումը կապել Լուսաւորիչին՝ մերժելով սակայն անոր առաքելականութիւնը: Անոնցմէ գլխաւորները Հացունի,<sup>24</sup> Ս. Կոզեան,<sup>25</sup> Կ. Ամատունի,<sup>26</sup> որոնց գլխաւոր նպատակը եղած է Հայոց եկեղեցին ենթակայ ընել Հռոմի աթոռին եւ զայն դնել Պապին գերիշխանութեան ներքեւ: Սակայն նկատի ունենալով Քալ մատենագիրներն ու անոնց գրութիւնները ու մեզի թողած իրենց ժառանգութիւնը՝ ոչ մէկ կասկած չեն ձգեր Հայ եկեղեցւոյ առաքելականութեան մասին: Այսպիսով նշումը կաթողիկէ եղբայրներու գրութիւնները ոչ մէկ համոզիչ հիմք ունին:

Լուսաւորիչէն յետոյ տեղի ունեցած եպիսկոպոսական ձեռնադրութիւնները ցոյց կու տան թէ Հայոց աթոռը երբեք ենթակայ չէ եղած Հռոմի աթոռին, ոչ ալ ստորադասը: Օրինակ մը ցոյց տալու համար, երբ Արիստակէս ձեռնադրուեցաւ Հայաստանի մէջ<sup>27</sup>, ըսել է թէ Հայաստանի մէջ գոյութիւն ունէին անելի քան երկու եպիսկոպոսներ: Բանի որ Նիկիոյ կանոններուն համաձայն, եպիսկոպոսական ձեռնադրութեան համար երեք եպիսկոպոս եւ մէկ արքեպիսկոպոս պէտք էր:<sup>28</sup> Երկրորդ՝ Արիստակէսի ձեռնադրութեամբ դարձեալ կը փաստուի, թէ Հայոց եկեղեցին Հռոմին կապուած չէ:

Քրիստոսի ժամանակ գոյութիւն ունէին հրեայ վաճառականներ, որոնք ծանօթ են իրենց առեւտրական ճամբորդութիւններով, որոնք կ'երթային Ասորեստան, Հայաստան, Պարսկաստան ու շրջակայ երկիրներ: Հայկ Մելգոնեանը կ'ըսէ, թէ այդ վաճառականները ունէին հրեական կրօն, քանի որ քրիստոնեայ բառը տակաւին չէր գործածուէր: Առաջին անգամ Քրիստոնեայ բառը Անտիոքի մէջ գործածուեցաւ:<sup>29</sup> Անոնք քրիստոնեաներ էին ըստ իրեն, քանի որ մովսիսականները պիտի չուզէին կոչուիլ հրեայ կրօն: M. Van Esbroeck-ը<sup>30</sup> կը մերժէ այս տեսակէտը, ըսելով թէ անոնք մոլեռանդ քրիստոնեաներ էին:

Անշուշտ առաքելներուն համար անելի դիրքին պիտի ըլլար քարոզել, ուր հրեաներ կային, քանի որ անոնց լեզուն ու մշակոյթը նոյն էր, եւ յաճախ անոնց հետ կը գիշերէին: Մելգոնեան այս բոլորը կ'ըսէ փաստելու համար, թէ առաքելները, որոնք Ասորեստան եւ Պարսկաստան գացին քարոզելու, եկան նաեւ Հայաստան: Միեւնոյն ատեն կ'ուզենք նշել, թէ լեզուն այնքան ալ կարեւոր չէր, քանի որ առաքելները Սուրբ Հոգիէն ներշնչուած կրնային ամէն տեսակի լեզուներ խօսիլ. ինչպէս կը վկայէ Աւետարանը<sup>31</sup>: Որոշ պատմաբաններու կարծիքը, թէ Քրիստոսի ժամանակ հրեական գաղութ կար Հայաստանի մէջ, իրականութեան չի համապատասխաներ, քանի որ չկայ փաստ մը: Հրեաները հաստատուած են եւ կամ գաղութ ունեցած են միայն երկրորդ կամ երրորդ դարերուն, երբ

<sup>24</sup> Հ. Վարդան վրդ. Հացունի, Կարեւոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ Պատմութենէն, Վենետիկ, 1927

<sup>25</sup> Ս. Կոզեան, Հայոց եկեղեցին, Պէտրոս 1961:

<sup>26</sup> G. Amadouni, *Église Arménienne et la Catholicité*, Venezia, 1978.

<sup>27</sup> Ագաթանգեղոս, Պատմագիրը Հայոց, Տիւրիս, 1909, էջ 452:

<sup>28</sup> Վազգէն Յակոբեան, Կանոնագիրը Հայոց, Բ. Ա. Երևան 1964, Նիկիոյ Ժողովի կանոններ, կանոն 4. էջ 119:

<sup>29</sup> Գործք Առաքելոց, ԺԱ 26:

<sup>30</sup> "Le Roi Sanatrouk et l'Apotre Thaddee" REA, IX, 1972, p.252.

<sup>31</sup> Գործք Առաքելոց, Ա. 1-4:

Հռովմացիները հալածանքի սկսան հրեաներու դէմ<sup>32</sup>։ Կրնանք վկայել նաեւ, թէ Քրիստոնէական լույսը տարածուեցաւ ոչ թէ խօսակցութեան լեզուով, այլ հաւատքով։ Հոգևոր պատմութիւնը Աստուծոյ վկայութիւնների պատմագրումն է։

Անելի ուշ շրջաններուն, մեր ձեռքը անցած են ասորական աղբիւրներ, օրինակ «Առաքելական Կանոններ»<sup>33</sup> որուն մէջ դարձեալ կը յիշուի Թադէոսին Հայաստան գալը, ինչպէս նաեւ Միքայէլ Ասորիի ժամանակագրութեան մէջ (1166-1199)։ «Յուդա, որ կոչեցաւ Թադէ, որ վասն իմաստութեան իւրոյ ասէին Ղեքէոս, որ է սիրտ և հոգի, քարոզեաց ի Հայս և լԱսորիս, և կատարեցաւ ի Սանատրկոյ ի Հայս»<sup>34</sup>։

Քանի որ Հայոց եկեղեցին Քրիստոսի եկեղեցւոյ մասն է և կը հաւատանք, որ Քրիստոս ինքն ճշմարտութիւն է, ուրեմն կարելոյ չէ, թէ ինչքան տուեալ ունինք Հայ եկեղեցւոյ պատմութենէն, յատկապէս իր սկզբնական շրջանին։ Պատճառը ոչ միայն քաղաքական վիճակն էր, այլ հայերէն գիր չունենալը նաեւ։ Հետեւաբար հայերը կը ստիպուին հիմնուիլ հայոց եւ օտար պատմաբաններու եւ մատենագիրներու՝ մեզի թողած տեղեկութիւններուն ինչպէս նաեւ հայկական ասանդութիւններուն վրայ։

Ոչ միայն անցեալին, այլ նաեւ 20-րդ դարու մեր մեծագոյն մասնագէտներէն Մաղաքիա Արք. Օրմանեան, Կարապետ Տէր-Մկրտիչեան, Մանուկ Աբեղեան, Երուանդ Տէր-Մինասեան<sup>35</sup> եւ Հայկ Մելքոնեան եկած են այն եզրակացութեան՝ հիմնուելով օտար եւ հայ մատենագիրներու եւ պատմաբաններու գործերուն վրայ, թէ Հայոց եկեղեցին առաքելական է եւ ենթարկուած չէ Հռոմի աթոռին։

Համադրելով, ի մի բերելով ու հիմնուելով Եւսեբիոսի, Փաւստոս Բիւզանդի եւ Մովսէս Խորենացիի մեզի թողած ստույգ տեղեկութիւններու վրայ, Հայերն ալ համարձակօրէն կ'ըսեն ու համոզուած են, որ Թադէոս Առաքեալը առաջինը եղած է Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը քարոզելու։ Այսպիսով Հայերը վստահ են, թէ Հայ եկեղեցիին ակունքները կու գան առաքելական շրջանէն եւ առանց միջնորդութիւններու, այլ ուղղակի Քրիստոսի աշակերտներէն՝ Թադէոս եւ Բարթողմէոս Առաքեալներով։

## Բ Մ Ա Ս

### Ս. ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ Ի ՀԱՅՍ

Բարթողիմէոս Առաքեալը նոյնպէս 12 առաքեալներէն մէկն էր, ինչպէս կը յիշեն Մատթէոս<sup>36</sup>, Մարկոս<sup>37</sup>, Ղուկաս<sup>38</sup> անտարանհչները։

Ըստ մատենագիտական աղբիւրներու, Բարթողիմէոս Առաքեալ իր քարոզչութիւնը սկսած է նախ պարսից եւ պարթեւաց կողմը, ապա՝ հնդկաց։ «Եւ գնացեալ անտի սրբոյն՝ եմաս յերկիրն Պարթեւաց, եւ Մարաց, եւ Եղիմացոց, եւ քարոզէր նոցա զբանն կենաց»։<sup>39</sup> Հոնկէ անցած է Հնդկաստան։ Քարոզած է նաեւ Ասորաց եւ Գերմանիկեցոց երկիրները եւ անկէ յետոյ վիճակ Թադէի, որ է Հայոց աշխարհը։ «Եւ անցեալ գնաց ի Գողթն գաւառ Հայոց, եւ փութացաւ հասանել ի վիճակ Թադէոսի ըստ հրամանի Հոգւոյն Սրբոյ»։<sup>40</sup>

<sup>32</sup> Ռ. Մանասերյան. Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, էջ 161-162։

<sup>33</sup> W. Cureton, Ancient Syriac Documents, Amsterdam, 1967 p. 37։

<sup>34</sup> Ժամանակագրութիւն Տեառն Միքայէլի Ասորոյ Պատրիարքի, Երուսաղեմ, 1871, էջ 101։

<sup>35</sup> Երուանդ վարդապետ Տէր-Մինասեան. Հայոց եկեղեցւոյ յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 1,3,9,26,41։

<sup>36</sup> Մատթէոս, Ժ.3։

Ստեփանոս Օրբելեանցն ալ իր Պատմութեան մէջ կը գրէ, թէ Բարթողիմէոս իր քարոզչութիւնը Սիւնեաց նախնազով սկսած է՝ Որդուայ գիւղէն, անցած է Գողթն եւ շարունակած է մինչեւ Արտաշատ քաղաքը, ուր, ինչպէս գիտենք Սոփերը Հայկականքի տեղեկութիւններէն, հոն Օթեաց խաչ բլուրին վրայ կը հանդիպի Թաղէոս Առաքեալին. «Եւ եկեալ Սուրբ Առաքեալն ի բլուրն Արտաշու, հանդիպեցաւ ալ ոմն յերկոտասանիցն Յովա-Յակոբեան, եւ կանգնեցին տեղւոյն ուր պատահեցան միմիանց զնշան տէրունական խաչին, եւ հրաժարեցին ի միմեանց մեծաւ ուրախութեամբ»:<sup>37</sup> Հայոց վիճակուած այս երկու առաքեալներուն միեւնոյն ատեն Հայաստանի մէջ քարոզելին եւ իրենց իրար հանդիպիլը կ'արժանացնէ իրենց տրուած այդ տիտղոսը, որպէս առաջին Լուսաւորիչները Հայոց: Դարձեալ ըստ նոյն աղբիւրին Թաղէոս կը մեկնի Արտազ, իսկ Բարթողիմէոսը կը շարունակէ դէպի Հեր եւ Ջարեվանդ ու կը հասնի Աղբակ: Այստեղ է որ կը հանդիպի Սանատրուկ թագաւորի քրոջ՝ Ոգուհիին: Վեցինս տեղեակ ըլլաով քրիստոնէութեան վարդապետութեան<sup>38</sup> կը հաւատայ եւ կ'ընդունի Քրիստոսի նշմարիտ խօսքը: Ապա իշխանուհին Առաքեալը կը ներկայացնէ թագաւորին, սակայն այդ հանդիպումը կ'ըլլայ ճակատագրական, որովհետեւ երկուքն ալ թագաւորի հրամանով կը նահատակուին Քրիստոսի սիրոյն: Նոյն տեղը այսօր եւս դեռ կը պահուին Սուրբ Բարթողիմէոսի անուամբ կառուցուած մայրավանքի աւերակները:

Բարթողիմէոս Առաքեալի Հայաստան գտնուիլը, քարոզելը եւ նահատակուելը ընդունուած իրականութիւն մըն է գրեթէ բոլոր քրիստոնէայ եկեղեցիներուն կողմէ: Հայերը կը հաւատան անոր Աղբակ գալուն: Այնուհետեւ Մովսէս Խորենացին իր Պատմութեան մէջ կը յիշէ, թէ ան Ուրբանոս կամ Արեքանոս նահատակուած է: «Եւ ինքն Սուրբ Առաքեալն եկեալ աստարանել ի Հայս եւ կատարեցաւ Ուրբանոս քաղաքի, ի Բարմա անուանեալ տեղւոյն լանուս առաքելոյն»: «Բայց վիճակեցաւ Հայոց եւ Բարթողիմէոս Առաքեալ որ եւ կատարեցաւ առ մեզ Արեքանոս քաղաքի»:<sup>39</sup>

Եթէ ընդունինք Սոփերը Հայկականքի եւ Խորենացիի պատմութիւնները, այն ատեն կրնանք ըսել, թէ միայն Շղեսիոյ ճամբով չէ, որ առաքելական քարոզութեամբ քրիստոնէութիւնը Հայաստան եկած է: Ինչպէս վերը յիշեցինք, Բարթողիմէոսը նախ Գողթն եկած է:

Սանդուխտ Կոչսի, Ոգուհիի, Ջարմանդուխտի եւ ուրիշներու վկայաբանութիւնները լաւագոյն փաստն են մեզի հաւատալ տալու, որ այս նոր կրօնը կանուխէն թափանցած էր արթունիքէն ներս, եւ ամենեւնի հետաքրքրականը այս է, թէ ասոր գլխաւորները ազնուական տիկիւններն էին: Ունենալէ յետոյ պատմիչներու եւ պատմաբաններու բաւարարող վկայութիւնները, հայերը յեռուելով իրենց աւանդութեան, համոզուած են, թէ Թաղէոս եւ Բարթողիմէոս Առաքեալները եղած են Հայաստանեայց Եկեղեցւոյ առաջին լուսաւորիչները, որոնք Քրիստոսի Լոյսն ու Վարդապետութիւնը ոչ թէ անուղղակի, ալ ուղղակի բերած են Հայոց Աշխարհը՝ լուսաւորելու հաչ ժողովուրդի միտքն ու հոգին:

<sup>37</sup> Մարկոս, Գ.16: <sup>38</sup> Դ- յաս, Զ.13: <sup>39</sup> Սոփերը Հայկականք ԺԺ, Վեներիկ, 1854, էջ 22:

<sup>40</sup> Նույն, էջ 24: <sup>41</sup> Նույն, էջ 25:

<sup>42</sup> Մովսէս Խորենացւոյ Մատենագրութիւնը, Վեներիկ, 1843, 1866, էջ 295 եւ 112: Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն Նահանգին Սիսական, Փարիզ, Կ. Շահնազարեանց, 1859, էջ 61: